ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 18-Ա

«14» փետրվարի 2023 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ / ԲՆԱԿԱՎԱՅՐ ԱՄԱՍԻԱ/ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ «ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի , Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1) կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի «14[1]» կետի դրույթներով , հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապեության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր փողոց 2, թիվ 17/3 հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության 2022թվականի նոյեմբերի 17-ի դիմումը՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N22122022-08-0026/ Ամասիա բնակավայր փողոց 2, թիվ 17/3 հասցեի 0,00089 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը/ կադաստրային ծածկագիր ՝ 08-010-0071-0007/ կառուցապատման իրավունքով 5 տարի ժամկետով, ամսական՝ 10000 Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրել օգտագործման «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը ՝ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 *Դեմ՝ 0* *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Մարդոյան Գ.
Աբրահամյան Ն.
Զաքարյան Հ.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«14» փետրվարի 2023 թվական
գյուղ Ամասիա